ՆՈՐԱՅՐ ՂԱԶԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԵՋ

Հենրիկ Էդոյանի երկրորդ ժողովածուն «Պատկեր և կեսօրն» է (1980 թ.), որը հայ մոդեռնիզմի մեկնարկային երկերից է: Մոդեռնիստական այս և մյուս ստեղծագործությունները շրջվեցին դեպի մարդու գոյաբանությունը, որը փիլիսոփայության գերխնդիրն է:

Էդոյանը մեզանում առաջիններից մեկն է, որ մարդուն և ժամանակը դիտում է աստվածաբանական կառուցվածքի մեջ՝ գեղարվեստի մոդեռնիստական համակարգումով: Գեղագետ-բանաստեղծը գոյաբանական խնդիրները տեղափոխում է երկրայինի ու երկնայինի հակադրությունների և ներդաշնակումների դաշտ: Իրար են առնչակցվում «այս աշխարհն ու գաղափարների երկինքը» (Ս. Ավգուստինոս): 20-րդ տագնապալի դարը բանաստեղծին մղում է մարդու փրկության որոնումներին, որոնք սնվում են հին եգիպտական և քրիստոնեական կրոնական տեսություններից, որովհետև բանաստեղծը փրկության ելքը քննում է պատմական փորձի ողջ կտրվածքով, ինչը բնութագրական է նույնժամանակյա համաշխարհային պոեզիային (գոյաբնական պոեզիան ավելի վաղ է սկսվել):

Արդի պոեզիայում գոյաբանության արմատավորումը իր հետ բերում էր լեզվական մեկ այլ հնարավորություն, որը դուրս էր ժամանակի գրականության լեզվի ինքնաբավ շրջանակից: Բանաստեղծական լեզուն, նրանում տրված գեղագիտությունը դուրս են «հարթաչափությունից», տարբերակների ընտրության փուլում են: Հնարավորությունները շրջվում են դեպի լեզվի նորակարգ ինքնընտրություն, որը նշանակում է աշխարհի երկընտրանքային իմաստավորում:

Հեգելն ասել է՝ փիլիսոփայությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ այն պատկերը, որ բացարձակ ոգին հաղորդում է լեզվին: Հ. Էդոյանը պատկեր հասկացությունը շոշափում է ասես հեգելյան իմաստով. ըստ նրա, պատկերը իմաստավորում է աշխարհը, սահմանավորն ու անսահմանը ներառում իր մեջ՝ միշտ բաց լինելով լեզվի և գիտակցության համար.

- Որտեղից տեսնում է երկինքը և այնտեղ
մի պատկեր վերջնական...

Աստված վերջին և բացարձակ պատկերն է:

Բանաստեղծական «ես»-ը, հրաժարվելով իր պատկերից, ձգտում է աստվածայինին.

- Ես այն պատկերը չեմ,
որ առել եմ վրաս, այլ նրանից այն կողմ,
ուր չկա ոչ մի պատկեր ...

(«Իրադարձություն, շփոթված դեմքի վրա»)

«Չկա ոչ մի պատկեր»-ը պետք է հասկանալ որպես բացարձակի պայմանում վերջավոր պատկերների բացակայություն:

Էդոյանի գրքի վերնագիրը՝ «Պատկեր և կեսօր», առաջին բառով մատնացույց է անում իր հակվածությունը կրոնափիլիսոփայական պատկերի կողմը (ի դեպ, հաջորդ՝ «Երկրային ժամանակ» գրքի մի բաժինը կոչվում է «Շրջապատկեր»):

Ընտրելով պատկերի բացարձակության գաղափարը՝ փիլիսոփա-բանաստեղծն իր պոեզիայում ներառում է գոյաբանական ամենաընդհանուր հասկացությունները, դիտարկում այն, ինչը պատկերացում է տալիս վերջավորի, անվերջի, գոյի, չգոյության և միակը հանդիսացող պատկերի մասին: Նման ընդհանուր պատկերացումները կապված են կրոնի հետ: Բանաստեղծը կրոնի չափումներով է քննում ժամանակն ու տարածությունը՝ միստիկական շրջանակում.

- Ոչ ոք չգիտի՝ ինչպես վերադառնալ
այն վայրը, որ չկա տարածության մեջ...

(«Վայրը, որ բացակա է»)

- Ամեն վերջ իմ առջև
բացում է մի վարագույր..

(«Կար մի ժամանակ»)

Էդոյանը հասնում է նաև վախճանաբանական չափումին, որը Աստծո Արքայությունն է:

Բանաստեղծը իր և իրերի փիլիսոփայական գիտակցման հետ մեկտեղ հիմնականում սկսեռվում է դեպի Լոգոսը և ճշմարտությունը: Պատկերը, խոսքը, ճշմարտությունը Էդոյանի պոեզիայում դրսևորվում են բացարձակապես կրոնական չափումներով:

«Ճշմարտությունը // չի կարող ստեղծվել», - ասված է «Փողոցի բաժանվող մասում» ժողովածուում: Ասել է, թե ճշմարտությունը արարչական է: Բանաստեղծը որոնում է մի այնպիսի ճշմարտություն, որը պիտի ապրեցնի ու փրկի:

Նա բացարձակ նպատակին վերաբերվում է բացարձակորեն: Ճշմարտությունն ու սխալը Էդոյանի համար առանցքային կանխադրույթներ են: Դրանց երկընտրանքը ընկած է Նոր Կտակարանի հիմքում:

Հռետորական հարցում-դիմումները Էդոյանի պոեզիայում հավիտենական ճշմարտության և նրան զուգահեռող սխալի զատորոշման իմաստն ունեն: Քրիստոնեական ճշմարտության նշանակետով մտքերը հանդիսավոր են, հիմնահասկացությունները՝ համարյա անփոփոխ:

Ժողովածուից ժողովածու ավելանում են քրիստոնեական «փաստարկումները».

- Քո կողքին է նա, քո գլխի վրա նրա սուրբ ձեռքն է:
Մարդը կապված է բացարձակ մտքի հետ.
- քո մտքին հավասար, ի՞նչ ես ուզում, ի՞նչ...,

(«Բանաստեղծն ասաց»)

Արվեստը ևս կապում է բացարձակ միտք հանդիսացող Աստծուն.

- Երաժշտությունը փնտրում է Աստծուն:

(«Այսքանից հետո մենություն»)

Լեզուն և միտքը նույնական են, ահա թե ինչու բանաստեղծը կարող է ասել՝ «Տվեք ինձ մի բառ // և ես աշխարհը // կշրջեմ ոտից գլուխ», («Սոսկ մի բառ»): «Փողոցի բաժանվող մասում» գրքի մի բաժինը, ինչպես գիտենք, կոչվում է «Լույսը ճիշտ պահիր»: Նրա իմաստը հասկանալուն մեզ օգնում է «Ի՞նչ լեզվով են խոսում աստվածներն իրար հետ» բանաստեղծությունը.

- Ի՞նչ լեզվով են խոսում
աստվածներն իրար հետ.
Գուցե լույսի փայլով,
որ ընկնում է մեկ-մեկ մեր բառերի վրա
և արթնացնում նրանց...

Եվ այսպես՝ Աստվածների լեզուն լույսն է, որն արթնացնում է բառերը: «Լույսը ճիշտ պահիր»-ը նշանակում է խոսքը, միտքը մաքուր, անթեք, Աստծու լեզվի համակարգում պահել: Աստծու լեզվի «մի բառ» - ով կարելի է աշխարհը «ոտից գլուխ» շրջել («Սոսկ մի բառ»):

Հին եգիպտական բանաստեղծության ավանդների օգտագործումը գալիս է լրացնելու քրիստոնեական միստիկայի վերծանումներին. Ֆրիդրիխ Հյոլդեռլինը հին հունականն է լծորդում քրիստոնեականին, Հ. Էդոյանը՝ հին եգիպտականը: Նպատակը մարդու փրկության ճանապարհի հայտնագործումն է: Մարդու էության քրիստոնեական իմաստավորումը լրացվում է հին եգիպտական կրոնական բանաձևերով (անվան, ստվերի, հոգիների միասնության բառերն ու կապակցությունները հին եգիպտացու համար մարդու էության գումարելիներն են, որոնք Էդոյանը հաճախակի է օգտագործում):

Հին եգիպտական բառ-բանալիները, հոգևոր գրականության հիմնական պատկերները ներքաշվում են ավետարանական իմաստաբանություն: Միստիկ դիրքորոշումը պատկերին զուգահեռում է նշանը («Երկնքի նշանն է հայտնվում իբրև լույս»): Բանաստեղծի սկզբունքն է՝ տեքստը հագեցնել իր իսկ ասած՝ Քրիստոսի նշաններով.

- Բերելու նշանները Հիսուս Քրիստոսի ...

(«Գյուղական գերեզմանոց»)

Նա Քրիստոսին թողնում է գաղտնիքի ոլորտում և խոսում նրա նշաններից («Դու, պատգամախոս, // մեկնաբանիր նշանները այս լուռ շարժումների»):

Աստծո նշաններից խոսելը բանաստեղծի միստիկ դիրքն է: Մոգության մեջ հիմնականում գործառում են նշանները: Այդ նշաններից է արյունը.

- Թե դա այն արյունն է, որով Դու պիտի երկիրը լվանաս
(նրան այլևս ջուրը չի մաքրի):

(«Հայտնություն»)

Արյունը հոգևոր ջուրն է, կնշանակի հոգևոր ջուրն է մաքրելու երկիրը: Մեկնություններից մեկում ասվում է, որ Քրիստոսը սիրեց եկեղեցին, և Իր կյանքը տվեց նրա համար, որպեսզի ջրի լվացումով այն մաքրի և իր խոսքով սրբի:

Մոգության, դյութանքի, հմայական գիտելիքների դաշտ բերելու համար, ինչպես ակնարկեցինք, Էդոյանը խոսքը հագեցնում է նշաններով, սակայն սա արդեն մի մոգությունն է, ուր նշանները Քրիստոսի կողմից մատնացուցված առարկա, գործողություն, իրադարձություն են նշանակում: Նշաններ են նաև խորհուրդները, որոնք դեպի Քրիստոս են տանում:

Հենրիկ Էդոյանը Աստծո կողմից նշանակվածի համակարգում է տեսնում տիեզերքը, գոյը, կեցությունը: Ահա թե ինչու նա կարող է ասել՝ «երբ հարցեր չեն տալիս, ես պատասխանում եմ» («Պարադոքսներ»): Պատասխանը մշտառկա է, որովհետև Աստծուց տրված է:

Վերադառնալով հռետորական հարցերի և դիմումների խնդրին՝ նշենք, որ գեղարվեստական խոսքի պատկերավորման այդ միջոցներն ուղղված են Աստծո ցուցանած ճշմարտությանը, որն իր մեջ նախապես ունի բոլոր պատասխանները, թեկուզ չանվանվող:

Ավետարանում Աստծո ճշմարտության կարգի մեջ են առնված երկրային հարաբերությունները՝ ճշմարտի և սխալի երկընտրանքի մեթոդաբանությամբ: Ճիշտը ավետարանականն է: Բանաստեղծն անցնում է խորքային հավատին, ըստ որի Աստված ամեն ինչ ուղղում է.

- Եվ բոլոր սխալները քո լույսում հայտնվելով
այլևս սխալ չեն:
(«Մի կին մայթն անցավ…»)

Սխալները Աստծո ճշմարտության մեջ «այլևս սխալ չեն»: Երկրային ճշմարտությունը գալիս է երկնքից.

- Թե գոնե մի պատուհան չբացես դեպի երկինք…
բոլոր դռները երկրային ճշմարտության կփակվեն քո առջև:
(«Գոնե մի պատասխան»)

Հիսուսի կյանքի յուրովի մեկնաբանված օրինակների վրա են կառուցված «Ու՞մ ձեռքին է հիմա», «Նրա մարմինը», «Հայտնություն», «Ինչու՞ ես ինձ լքում» բանաստեղծությունները («Փողոցի բաժանվող մասում»): «Լույսը ճիշտ պահիր» շարքի մյուս բանաստեղծությունները հարաբերվում են կտակարանային բազմաբնույթ պատկերաշերտերի: Սակայն բանաստեղծը չի մնում կրոնական բանաձևերի ու հասկացությունների շրջանակում: Նա գիտի ժամանակակից փիլիսոփայությունն ու գեղագիտական հոսքերը, որոնք ծնել են հեղինակի խիստ արդիական աշխարհատեսությունը, որի առանցքում հավերժական ճշմարտությունը դրված է ամենաընդհանուր արծարծումների, մարդուց Աստծուն ձգվող բարդ հարաբերությունների մեջ: Բանաստեղծության դրամատիզմը սնում է աստվածային ճշմարտության և մարդու սխալի հակադրությունը.

- Իսկ մա՞ղը, որ լքել է դահլիճն ու բեմը…
և անցնել, անհետացել կուլիսներից այն կողմ:

(«Իսկ մա՞ղը»)

- Մտնեմ նե՞րս,
բացեմ մի օդանցք, խախտեմ նստածների
կարգը խորհրդավոր…

Քանի որ սխալն ուղղում է միայն Աստված, բանաստեղծն այսպիսի դիմում է ա-նում.

- Ուղղի՛ր իմ կյանքն, Աստվա՛ծ…
Կանգնեցրու իմ անկումը իր ընթացքի մեջ…

(«Նա բացեց անկողինը …»)

Ժամանակի ողբերգությունը Էդոյանի համար շատ խորն է, որովհետև ժամանակը դուրս է աստվածային ծիրից.

«Ինչքա՞ն կարելի է սպասել մի երկու նախադասության,
որ պիտի ուղարկեր, բայց չի ուղարկում»:

(«Սխալ հասցեներ»)

Ժամանակը դուրս է տիրոջ խոսք ու ճշմարտությունից (սրանց ժամանակը հավերժն է):
Բանաստեղծը ինքն է լուծում առաջարկում.

- հավերժությունը
դարձնում ենք ժամանակ
(որպեսզի մենք ապրենք)…

(«Ոսկեզօծ մեղուներ»)

Սա նշանակում է, որ աստվածային հավերժությունից պետք է ստանանք կարգը, խոսքն ու միտքը, լույսը ճիշտ պահենք, որպեսզի ոտք դնենք երանության շեմից ներս՝ մեր մեջ փակելով ողբերգության վարագույրը:

Իսկ մտքում լողում էին բոցավառ
էջերը Նոր Կտակարանի...